

**«Լանթերման-Պետրիս-Շորթի օրենքը» (LPS, Lanterman  
Petris-Short) հասկանալը**

*Չրատ.՝ #5608.10 - Armenian*

**Գլուխ 2. LPS խնամակալություն**

LPS խնամակալությունը օրինական մեխանիզմ է, որտեղ դատարանը նշանակում է որևէ անձի՝ Ձեզ համար օրինական որոշումներ կատարելու նպատակով: Այս անձը կոչվում է խնամակալ: Ձեր խնամակալը կարող է ի վիճակի լինել որոշումներ կայացնել, ինչպես օրինակ այն, թե արդյոք Դուք կարող եք սկսել կամ դադարեցնել հոգեբուժական դեղամիջոցներ ընդունել կամ այլ բուժում ընդունել: Խնամակալը նաև կարող է կառավարել Ձեր դրամները և որոշել, թե որտեղ պետք է Դուք ապրեք: Երբ Դուք խնամակալության ներքո գտնվեք, դատարանը կարող է սահմանափակել քվեարկելու, պայմանագրեր կնքելու, մեքենա վարելու կամ սեփական գեյք ունենալու Ձեր իրավունքը: LPS խնամակալությունը կարող է ամեն անգամ առավելագույնը մեկ տարի տևել, սակայն այն կարող է թարմացվել դատարանում՝ տարվա վերջում:

«Խնամակալության» նպատակը «անհատականացված բուժում, վերահսկողություն և տեղավորում տրամադրելն է»: Բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգիրք (WIC, Welfare and Institutions Code) § 5350.1: Խնակալությունը սահմանվում է որպես «ծառայություն, որը նախատեսված է այն անձանց ֆինանսական և անձնական պաշտպանության համար, ովքեր ծանր հաշմանդամություն ունեն՝ [LPS] օրենքի դրույթների ներքո»: 9 CCR § 548(b): Խնամակալության ծառայությունները ներառում են խնամակալության կառավարում, որը նշանակում է « ծառայություններ, որոնք տրամադրվում են նշանակված

խնամակալի կողմից՝ կառավարելու խնամարկուհի ֆինանսական ռեսուրսները և երաշխավորելու անհրաժեշտ բուժման ծառայությունների և հոգեկան առողջության սոցիալական ծառայությունների մատչելիությունը և համապատասխանությունը»: 9 CCR § 548(b)(2):

### **Խնամակալությունը և «Ծանր հաշմանդամությունը»**

Ձեր բժիշկը կամ այն անձը, ով պատասխանատու է Ձեր խնամքի համար, կարող են խնամակալության հայց հարուցել, եթե նրանք վստահ են, որ Դուք դարձել եք կամ հավանական է, որ կշարունակեք «ծանր հաշմանդամ» լինել: Սա իրավաբանական տերմին է, որը նշանակում է, որ Դուք ֆիզիկական վնասի վտանգի տակ եք, որովհետև ի վիճակի չեք ինքներդ Ձեզ սնունդ տրամադրել, հագուստ հագնել կամ կացարան ունենալ՝ հոգեկան առողջության խնդիրների պատճառով: WIC § 5008:

Շատ գործոններ կարող են ազդել այն բանի վրա, թե արդյոք դատարանը կարող է ինչ-որ մեկին ծանր հաշմանդամ համարել: Օրինակ, այն անձը, ով ի վիճակի չէ ինքն իր խնամքը հոգալ, բայց ով կարող է ապահով կերպով գոյատևել երրորդ պատրաստակամ կողմի օգնությամբ, հավանաբար ծանր հաշմանդամ չի համարվի: Տե՛ս WIC § 5250. § 5250(d)-ը 14-օրյա ձերբակալության վերաբերյալ, և WIC § 5350(e)-ը՝ խնամակալի նշանակումների վերաբերյալ: Բացի այդ, թեև անցյալի գործողությունները կարող են ի նկատի առնվել, անձը ծանր հաշմանդամ չի համարվում, եթե նա **ներկայումս** վտանգ չի ներկայացնում ինքն իրեն համար՝ ինքնախնամք տրամադրելու անկարողության պատճառով: Ապագա վնասի հավանականությունը նույնպես կարող է բավարար չլինել՝ կատարման չափանիշները բավարարելու համար: *Տե՛ս «Conservatorship of Benevuto»-ն*, 180 Cal.App.3d 1030 (1986):

### **Խնամակալության ընթացակարգը**

Եթե Ձեր բժիշկը կամ խնամք տրամադրողը վստահ են, որ Դուք ծանր հաշմանդամ եք, նրանք կարող են միջնորդություն ներկայացնել Պետական խնամակալության գրասենյակ՝ խնամակալության հետաքննություն սկսելու համար: Ծանր հաշմանդամ սահմանմանը համապատասխան ամեն ոք ինքնաբերաբար խնամակալության չի ենթարկվում:

Չետաքննողը կորոշի, թե արդյոք պետք է կամ պետք չէ դատարանին խնդրել խնամակալություն նշանակել: WIC § 5354: Եթե հետաքննության արդյունքում խնամակալության միջնորդություն լինի, ապա միջնորդության համաձայն կնշանակվի ամենահարմար անձը՝ որպես խնամակալ ծառայելու համար: WIC § 5355: Եթե միջնորդագիր է ներկայացվել՝ խնամակալություն նշանակելու համար, Ձեզ պետք է պատճեն և տեղեկատվության տրամադրեն խնամակալությանը վերաբերող լսման ժամանակահատվածի նշամաբ:

### **Ժամանակավոր խնամակալություն**

Եթե Դուք գտնվում եք հիվանդանոցում և 14-օրյա ձերբակալման ներքո, ձերբակալության ավարտին հնարավոր է, որ Ձեր նկատմամբ սահմանեն 30-օրյա խնամակալություն: WIC § 5352: Ձեզ ժամանակավոր խնամակալություն տրամադրելու համար դատարանը պետք է վստահ լինի, որ Դուք ծանր հաշմանդամ եք: Դատարանը կարող է սահմանափակել Ձեր իրավունքներից մի քանիսը՝ ապրելու վայր ընտրելու, վարորդական իրավունք ունենալու և այլնի առնչությամբ: Դուք դեռ ունեք դատարանի կողմից չորոշված որևէ բժշկական բուժումը մերժելու իրավունքը:

Ենթադրվում է, որ Դուք նախքան ժամանակավոր խնամակալության հաստատումը ծանուցում կստանաք, բայց հաճախ մարդիկ տեղյակ չեն լինում, որ իրենք ժամանակավոր խնամակալության ներքո են, մինչև որ նրանց նկատմամբ դա չի կիրառվում:

Երբ անձի նկատմամբ կիրառվում է ժամանակավոր խնամակալություն, Պետական խնամակալության գրասենյակի պարտականությունն է հետաքննել, թե արդյոք անձը պետք է ամբողջական LPS խնամակալության ներքո լինի:

Եթե Դուք նախապես տեղյակ լինեք, որ դիտարկվում եք ժամանակավոր խնամակալության համար, Դուք կարող եք փորձել ցույց տալ, որ Դուք չեք համապատասխանում «ծանր հաշմանդամ» սահմանմանը: Դուք կարող եք դա անել՝ ցույց տալով, որ Դուք ի վիճակի կլինեք սնունդ, հագուստ և կացարան ապահովել: Եթե հնարավոր է, փորձեք այդ բաները ցույց տալ Ձեզ խնամք տրամադրողին կամ սոցիալական աշխատողին, որպեսզի նրանք կարողանան որոշել և չմիջնորդեն Ձեր խնամակալությունը:

## **Մշտական խնամակալություն**

Ժամանակավոր խնամակալությունից բացի դատարանը նաև կարող է Ձեզ նշանակել «մշտական խնամակալություն»: Տեխնիկական տեսանկյունից, ոչ մի խնամակալություն մշտական չէ, բայց այն կարող է ամեն տարի թարմացվել (նաև հայտնի է որպես «վերահաստատում») և սահմանափակում չկա, թե այն քանի անգամ կարող է թարմացվել: Տե՛ս ստորև տրված «խնամակալության դադարեցում» բաժինը՝ հավելյալ տեղեկություններ ստանալու խնամակալության թարմացման վերաբերյալ:

Խնամակալության կիրառման համար մասնագիտացված անձը Ձեզ նախ պետք է գնահատի և որոշի, որ Դուք և՛ ծանր հաշմանդամ եք և՛ պատրաստակամ կամ ի վիճակի չեք կամավոր ընդունելու բուժումը: WIC § 5352: Բացի այդ, խնամակալության հետաքննողը պետք է հետաքննի խնամակալության հնարավոր բոլոր այնընտրանքները և միայն այն դեպքում խնամակալություն առաջարկի, եթե այլ հնարավոր այլընտրանքներ չկան: WIC § 5354.

Խնամակալությանը վերաբերող լսմանը Պետական խնամակալության գրասենյակի ներկայացուցիչը դատարանում կլինի և դատավորին կամ երդվյալ ատենակալին կտեղեկացնի, թե ինչու են նրանք կարծում, որ Դուք խնամակալության կարիք ունեք: Նիստին դատարանը կորոշի, թե արդյոք Դուք պետք է խնամակալության ներքո լինեք, ինչպես նաև ինչ իրավունքներ պետք է պահպանեք և որ իրավունքները կկորցնեք խնամակալության արդյունքում:

Եթե դատարանը Ձեզ խնամակալություն նշանակի, Ձեր խնամակալը կարող է ընկեր կամ ընտանիքի անդամ լինել: Դուք կարող եք առաջադրել, թե ում կցանկանայիք որպես Ձեր խնամակալ նշանակել, սակայն դատարանը պետք է որոշի, թե ով է Ձեր խնամակալության համար ամենահարմար անձը կամ գործակալությունը: WIC § 5355: Եթե դատարանը ոչ մի անձ կամ գործակալություն չգտնի, ով պատրաստակամ կլինի որպես Ձեր խնամակալ ծառայել, ապա դատարանը կնշանակի Ձեր վարչաշրջանի Պետական խնամակալին: WIC § 5354.5:

## **Խնամակալությունը վիճարկելը**

### **Երդվյալ ատենակալների դատարանի իրավունք**

Դուք երդվյալ ատենակալների դատարանի իրավունք ունեք՝ որոշելու, թե արդյոք Դուք ծանր հաշմանդամ եք: Սակայն Դուք երդվյալ ատենակալների մասնակցությամբ պարտադիր դատավարություն չեք ունենա: **Երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության համար Դուք պետք է Ձեր խնդրանքը ներկայացնեք Ձեր խնամակալության միջնորդագրի լուսմից հետո հինգ (5) օրվա ընթացքում:** Եթե Դուք նախքան լուսմը երդվյալ ատենակալների դատավարության համար խնդրանք ներկայացնեք, խնդրանքը լսման հրաժարում կնշանակի: WIC § 5350(d)(1):

Եթե Դուք երդվյալ ատենակալների դատարանն ընտրեք, երդվյալ ատենակալը պետք է անանուն լինի Ձեզ ծանր հաշմանդամ համարելու՝ նախքան Ձեր նկատմամբ խնամակալության կիրառումը: Եվ դատավարությանը ներկայացված ծանր հաշմանդամությունը հաստատելու ապացույցը պետք է կասկածից վեր լինի: *St'u «Sorenson v. Superior Court»* (App. 6 Dist: 2013) 161 Cal.Rptr.3d 794, 219 Cal.App.4th 409:

Ձեր դատավարությունը պետք է կայանա Ձեր խնդրանքից հետո տաս (10) օրվա ընթացքում, թեև դատարանը կարող է երկարաձգել այն ոչ ավելի, քան տասնհինգ (15) օր, եթե խորհուրդը խնդրել է:

### **Դատարանի դահլիճին վերաբերող հուշումներ**

- Դատարանում եղած ժամանակ հնարավորինս կոկիկ հագնվեք:
- Նույնիսկ եթե Դուք համաձայն չեք և բարկացած եք այն ամենի համար, ինչ կարող է Ձեր մասին դատարանում ասվել, կարևոր է, որ Դուք հանգիստ մնաք:
- Պատրաստ եղեք դատարանում բացատրելու, թե ինչպես Դուք կկարողանաք հոգալ Ձեր խնամքին առնչվող հիմնական կարիքները, այդ թվում՝ սնունդը, հագուստ և ապրելու տեղ ունենալը:
- Եթե Դուք ճանաչում եք ինչ-որ մեկին, ով Ձեր անունից վկայություն կտա, հատկապես Ձեզ օգնելով սննի, հագուստի և ապրելու վայրի հարցում, փորձեք երաշխավորել, որ նա գա դատարան Ձեր լսման համար:

- Դուք պետք է պատրաստված լինեք դատավորին պատմելու, թե հոգեկան առողջության կամ բուժման ինչ տեսակ կստանաք, և որտեղ պետք է գնաք՝ այն ստանալու համար:

## **Ընդհանուր հուշումներ**

Դուք **փաստաբան ունենալու իրավունք ունեք**, իսկ եթե Դուք փաստաբան չունեք, դատարանը Ձեզ փաստաբան կնշանակի: Սովորաբար դատարանի կողմից նշանակված փաստաբանը հանրային պաշտպան է: Դատարանը պետք է ինսամակալության միջնորդագրի ամսաթվից հետո հինգ օրվա ընթացքում փաստաբան նշանակի: WIC § 5365: Դուք կարող եք Ձեր փաստաբանի հետ քննարկել դատարանի կողմից Ձեզ անկախ հոգեբույժ նշանակելու հավանականությունը, ով անկախ կլինի հիվանդանոցից՝ Ձեզ գնահատելու և մեկ այլ կարծիք տալու առ այն, թե արդյոք Դուք իսկապես ինսամակալության կարիք ունեք:

Դուք պետք է պատրաստված լինեք դատավորին ասելու, թե ինչու ծանր հաշմանդամ չեք: Մանրամասն ծրագիր կազմեք՝ ցույց տալու, թե ինչպես պետք է ինքներդ հոգաք Ձեր սնունդը, հագուստը և կացարանը: Պատասխանեք «ով», «ինչ», «որտեղ», «երբ» և «ինչպես» հարցերին:

Պարտադիր չէ, որ Դուք Ձեր սեփական տունը կամ բնակարանն ունենաք՝ ապացուցելու, որ Դուք ապրելու տեղ ունեք: Նույնիսկ եթե մեկ այլ անձ, օրինակ Ձեր ընկերը կամ բարեկամը, պատրաստակամ է Ձեզ ապրելու տեղ տալ, սա կարող է օգնել Ձեզ խուսափել ինսամակալությունից: Տե՛ս «*Conservatorship of Jesse G.*», 248 Cal. App. 4th 453, 460, 203 Cal. Rptr. 3d 667, 672 (2016): Սա կոչվում է «երրորդ կողմի աջակցություն» և կարող է օգտագործվել՝ ինսամակալությունը վիճարկելու համար: Այդ անձը պետք է գրավոր ձևակերպում տրամադրի դատավորին՝ նկարագրելով Ձեզ օգնելու իր պատրաստակամությունը: WIC § 5350(e):

Որոշ մարդիկ նույնիսկ համարում են, որ համայնքային ռեսուրսների լավ օգտագործումը, ինչպիսիք են սննդի հավաքման կետերը և համայնքային կացարանները կարող են նրանց օգնել՝ հեռու մնալ ինսամակալությունից: Եթե Դուք լավ բժիշկ կամ թերապևտ ունեք համայնքում, օգտակար կարող է լինել նրանց խնդրել Ձեր անունից վկայություններ տալ:

Եթե Դուք ծրագրում եք Սոցիալական ապահովության կամ այլ նպաստներ ստանալ, Դուք պետք է դատավորին բացատրեք, որ տեղյակ եք, թե ինչպես պետք է գրանցվել և ստանալ այդ նպաստները:

## **Կացարանը ինամակալության ներքո գտնվելու ժամանակ**

Երբ որ դատարանը ինամակալ նշանակի, նա պետք է որոշի, թե որտեղ պետք է Դուք ապրեք: Ինամակալի առաջնահերթությունն է Ձեզ այնպիսի վայրում տեղավորել, որը նվազագույն սահմանափակ համապատասխան տեղավորումը կլինի: WIC § 5351(a)(1)(A): Սա կարող է ներառել Ձեր իսկ տունը կամ բարեկամի տունը: Եթե դա տարբերակ չէ, հաջորդ առաջնահերթությունը Ձեզ համապատասխան հաստատությունում տեղավորելն է, որը հնարավորինս մոտ կլինի կամ Ձեր կամ Ձեր բարեկամի տանը: WIC § 5351(c)(1): Հնարավոր այլընտրանքային տեղավորումները կարող են ներառել նահանգային կամ վարչաշրջանի հիվանդանոցը կամ համապատասխան հաստատությունները: WIC § 5358(a)(2):

Ձեր ինամակալը կարող է Ձեզ տեղափոխել նվազ սահմանափակ միջավայր՝ առանց դատարանին ծանուցելու: Ձեր ինամակալը նաև կարող է Ձեզ ավելի սահմանափակ **միջավայր**, տեղափոխել, բայց դատարանին, Ձեր փաստաբանին, վարչաշրջանի հիվանդանոցի իրավունքների դատապաշտպանին և որևէ այլ նշանակված անձի գրավոր ծանուցում ներկայացնել այդ մասին: Ձեր ինամակալը կարող է Ձեզ ավելի սահմանափակ միջավայր տեղափոխել, եթե նա պատճառ ունի հավատալու, որ Ձեր առողջական խնդիրն այնպես է փոխվել, որ այն ավելի սահմանափակ տեղավորում է պահանջում կամ Դուք սկսել եք անմիջական վտանգ ներկայցնել Ձեզ և այլոց համար: WIC § 5358(d)(1):

Պետք է նշվի, որ տեղավորման պահանջները տարբեր են, եթե Ձեր նախնական պարտավորվածությունն առնչվում էր հանցագործության հետ, որը ներառում էր մահ կամ լուրջ մարմնական վնասվածք: WIC § 5008(h):(1)(b): Այդ դեպքում, բացի այլ նկատառումներից, տեղավորման դեպքում առաջնահերթ կհամարվի բուժումը, ինչպես նաև հասարակության անվտանգությունը պաշտպանելը: WIC § 5358(a)(1)(B): Տե՛ս նաև WIC § 5358(c)(2) և WIC § 5358(d)(2):

## **Ձեր խնամակալության տեղավորումը վիճարկելը**

Երբ Դուք խնամակալության ներքո եք, Ձեր խնամակալը սովորաբար իրավագոր է որոշել, թե որտեղ պետք է Դուք ապրեք: Սա չի նշանակում, որ Դուք ամբողջությամբ Ձեր խնամակալի կարեկցանքի ներքո եք: Եթե Դուք և Ձեր խնամակալը համաձայնության չգաք Ձեր տեղավորման վերաբերյալ, Դուք կարող եք կրկին դիմել դատարան՝ Ձեր տեղավորման համապատասխանությունը վիճարկելու համար: Սա կոչվում է տեղավորման **վերանայմանը վերաբերող լսում ունենալ**: Դուք կարող եք տեղավորման վերանայմանը վերաբերող լսում խնդրել այն վարչաշրջանում, որտեղ խնամակալությունը հաստատվել է կամ այն վարչաշրջանում, որտեղ Դուք ապրում եք: WIC § 5358.7: Սակայն, երբ Դուք կրկին դիմեք դատարան տեղավորմանը վերաբերող լսման վերանայման համար, Դուք պետք է վեց ամիս ևս սպասեք՝ հաջորդն ստանալու համար: See WIC 5358(d)(4) և WIC § 5358.3:

Տեղավորման վերանայմանը վերաբերող լսմանը Դուք դատավորին պետք է խնդրեք միայն վերանայել Ձեր տեղավորման համապատասխանությունը, այլ ոչ թե այն, թե արդյոք Դուք պետք է խնամակալության ներքո լինեք: Տեղավորմանը վերաբերող լսման վերանայում ստանալու լավագույն ձևը այն փաստաբանին դիմելն է, ով Ձեզ ներկայացրել է խնամակալությանն առնչվող լսմանը: Եթե Դուք դրամ չունեք փաստաբանին վճարելու համար, Դուք հավանաբար ներկայացված եք եղել դատարանի կողմից նշանակված փաստաբանի կողմից: Դատարանների կողմից նշանակված փաստաբանների մեծ մասը հանրային դատապաշտպաններ են:

Ձեր սոցիալական աշխատողը պետք է ունենա դատարանի կողմից նշանակված դատապաշտպանի անունը և հեռախոսահամարը: Դուք նաև կարող եք զանգահարել հիվանդների իրավունքների դատապաշտպանին՝ պարզելու, թե ինչպես պետք է կապվեք Ձեր փաստաբանի հետ: Երբ զանգահարեք Ձեր փաստաբանին, տրամադրեք Ձեր ամբողջական անունը և ծննդյան ամսաթիվը: Եթե Ձեր փաստաբանը գրասենյակում չէ, հարցրեք, թե արդյոք կարող եք հաղորդագրություն թողնել: Համոզվեք, որ թողել եք Ձեր անունը, ծննդյան տարեթիվը, այն հաստատության անվանումը, որտեղ ապրում եք, հեռախոսահամարը, որով հնարավոր է Ձեզ հետ կապվել և Ձեզ հետ



խոսելու ամենահարմար ժամը: Նաև անպայման տեղեկացրեք, որ տեղավորմանը վերաբերող լսման վերանայում եք խնդրում:

Դուք պետք է Ձեր փաստաբանին առնվազն երկու շաբաթ ժամանակ տրամադրեք, որպեսզի նա փորձի Ձեզ հետ կապվել: Եթե Ձեր փաստաբանը չկապվի Ձեզ հետ, Դուք կարող եք Ձեր միջնորդագիրը ներկայացնել դատարանին՝ տեղավորման վերանայման լսում խնդրելով:

## **Խնամակալության դադարեցում**

Նույնիսկ եթե Դուք բաց թողնեք Ձեր խնամակալության լսումը կամ դատավարությունը, կան բաներ, որոնք Դուք կարող եք անել՝ խնամակալության Ձեր տեղավորումը վիճարկելու համար:

### **Վերալսումներ**

Դուք կարող եք **միջնորդություն ներկայացնել** (խնդրել) դատարան վերալսման համար՝ պարզելու, թե արդյոք Դուք պետք է խնամակալության ներքո լինեք: Եթե դիմեք, Դուք վերալսման իրավունք կունենաք առ այն, թե արդյոք Դուք առհասարակ պետք է խնամակալության ներքո լինեք: Վերալսմանը Դուք ստիպված կլինեք ապացուցել, որ ծանր հաշմանդամ չեք: Վերալսմանը Դուք երդվյալ ատենակալների դատավարության իրավունք չունեք: WIC § 5364: Նաև տեղյակ եղեք, որ երբ Ձեր վերալսումը տեղի ունենա, Դուք վեց ամիս մեկ այլ վերալսում չեք կարողանա խնդրել: WIC § 5364:

Վերալսում խնդրելու ամենադյուրին միջոցը այն փաստաբանին դիմելն է, ով Ձեզ ներկայացրել է այն ժամանակ, երբ Ձեզ խնամակալություն է տրվել: Փաստաբանին տեղեկացրեք, որ Դուք ցանկանում եք դատարանին միջնորդագրի ներկայացնել վերալսման համար:

### **Ազատագրկման օրինականությունն ստուգելը**

Միացյալ Նահանգների սահմանադրությունը ցանկացած անձի, ով վստահ է, որ կառավարության (այդ թվում խնամակալի) կողմից անօրինաբար է ազատագրկվել, թույլ է տալիս «**ազատագրկման օրինականությունն ստուգելու նպատակով**» բողոք ներկայացնել՝ բանտարկությունը վիճարկելու համար: Կալիֆորնիայում հատուկ օրենք գոյություն ունի, որը նահանգային ցանկացած հիվանդանոցի հիվանդի թույլ է տալիս կարգադրագիր ներկայացնել: WIC § 7250: Ձեր փաստաբանից կամ դատապաշտպանից օգնություն հայցեք:

## **Խնամակալության տարեկան թարմացում**

Խնամակալության յուրքանչյուր ամբողջական տարուց հետո վարչաշրջանը պետք է որոշի, թե արդյոք պետք է դադարեցվի խնամակալությունը, թե՞ դատարանին պետք է խնդրել այն թարմացնել: Եթե վարչաշրջանը որոշի թարմացնել Ձեր խնամակալությունը, Դուք կարող եք վիճարկել այն և նոր դատավարություն խնդրել դատավորից կամ երդվյալ ատենակալից: WIC § 5362:

## Իրավունքները խնամակալության ժամանակ

Եթե Դուք հիվանդանոցում եք LPS խնամակալության ներքո, Դուք ունեք այն նույն իրավունքները, ինչ այլ անձինք՝ Ձեր սեփական հագուստը կրելու, գաղտնի հեռախոսազանգեր կատարելու, չբացված հաղորդակցություն ստանալու, ամեն օր այցելուներ ունենալու, անձնական պահեստավորման տեղ ունենալու, ճաշարանից օգտվելու համար պատշաճ քանակությամբ գումար ունենալու և այլ իրավունքներ: WIC § 5325.<sup>1</sup> Ձեր խնամակալը իրավասու չէ որևէ կերպ այս իրավունքները սահմանափակելու համար:

Դատավորը կարող է որոշ իրավունքներ սահմանափակել՝ հիմնվելով այն անձի առաջարկների վրա, ով հետաքննել է, թե արդյոք Դուք պետք է խնամակալության ներքո լինեք: Սրանք ներառում են քվեարկելու, վարորդական վկայական ունենալու, պայմանագրեր կնքելու, ընթացիկ բուժման համաձայնությունը մերժելու իրավունքը, ինչպես նաև մերժելու համաձայնել այն բուժմանը, որն առնչվում է ծանր հաշմանդամ լինելու հետ: WIC § 5357:

Եթե կարծում եք, որ Ձեզ ստիպել են ապրել այնպիսի մի վայրում, որը չափազանց սահմանափակ է Ձեր կարիքների համար, կամ խնամակալին չափից ավելի շատ իրավասություններ են տվել Ձեր կյանքի հանդեպ, Դուք կարող եք դատարանից լսում խնդրել՝ այս իրավունքները վերանայելու համար: Իրազեկ եղեք, որ երբ Դուք այս միջնորդությունը ներկայացնեք, դատարանը Ձեր վերջին միջնորդությունից հետո վեց ամսվա ընթացքում մեկ այլ միջնորդություն չի ընդունի: WIC § 5358(d)(4) և WIC § 5358.3:

Բացի այդ, խնամակալը չի կարող Ձեզից պահանջել որևէ վիրահատության ենթարկվել, եթե Դուք մահվան կամ լուրջ մարմնական վտանգի առջև չեք, այն բացառությամբ, որ Դուք կամ նախապես համաձայնություն եք տրամադրել կամ դատարանը որոշում է կայացրել՝ այդ առանձնահատուկ վիրահատության համար: WIC § 5358(b): Եթե Դուք ցանկանում եք վիճարկել դատարանի որոշումը, Դուք կարող եք դատարանի լսման միջնորդագիր ներկայացնել, որը պետք է կատարվի՝ նախքան որոշումը կայացնելը: WIC § 5358.2:

<sup>1</sup> Խնդրում ենք նշել, որ եթե Դուք տեղավորվել եք նահանգային հիվանդանոցում կամ բանտում եք, այս իրավունքներից մի քանիսը կարող են տարբեր լինել:

[«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

**ՀԱՎԵԼՎԱԾ.  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ՝ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ  
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ՝ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ, ՈՐ ԵՍ «ԾԱՆՐ  
ՀԱՇՄԱՆԴԱՄ» ՉԵՄ**

**[ԼՐԱՑՐԵՔ ԶԵՎԱԹՈՒՂԸ ԵՎ ԱՅՆ ՏՎԵՔ ԶԵՐ  
ՓԱՍՏԱԲԱՆԻՆ  
ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼԻՆ]**

1. Անուն, հասցե, գործի համարը, եթե հայտնի է

2. Իմ ամսեկան եկամուտը \_\_\_\_\_ է: Ես դրամ ստանում եմ  
\_\_\_\_\_ -ից: Սա կարող է  
ներառել Սոցիալական ապահովության եկամուտը (SSI), վետերանի  
նպաստը, կամ աշխատանքի եկամուտը:

3. Ես նախատեսում եմ այս հասցեում ապրել: Ես սեփականություն  
ունեմ կամ ես գումարի այս չափը կծախսեմ վարձակալության համար:

4. Այս ձևով ես կհոգամ իմ սնունդը: Ես այս գումարը կօգտագործեմ  
սննդի համար:

5. Այս ձևով ես կհոգամ իմ հագուստը: Ես այս գումարը կօգտագործեմ հագուստի համար:

6. Կարող եմ ընկերներ կամ ընտանիքի անդամներ լինել, ովքեր կարող են ինձ օգնել՝ ինձ սնունդ, հագուստ և կացարան տրամադրելով: Նրանց անունները և այն, թե ինչպես պետք է նրանց հետ կապվել, նշված են ստորև: (\*Չամոզվեք, որ կցել եք այն անձի գրավոր նշումը, ով պատրաստակամ է օգնել, այսինքն այն, որ նա պատրաստակամ է օգնել և նշել է, թե ինչպես կարելի է նրա հետ կապվել):

7. Եթե բուժման կարիք ունենամ, ես պատրաստակամ եմ այս անձից կամ գործակալությունից բուժում ստանալ:

8. Ես կարող եմ այս ձևով հասնել իմ պայմանավորվածություններին կամ հանդիպումներին:

---

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մնացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով(Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա):

*Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝*

[http://www.disabilityrightsca.org/  
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).